ՌԱՓԱՅԷԼ ԵԴՈՒԱՐԴ ՂԱՐԱՄԵԱՆ

(Տես յէջ 38)

Բուզայեան վարդապետ յանձնառու եղաւ դաստիարակ և կրթիչ ըլլալ պարոն Եդուարդայ երկու երիտասարդոյն որդւոցը՝ Աղեքսանդրի և Յովհաննու, ընկերելով անոնց ի Հնդկաց մինչեւ ի Լոնտրա, և հոն անգղիական դպրոցաց մէջ ուսման և կրթութեան դնել զիրենք՝ իր առաջնորդութեան և հսկողութեան տակ։ Գորովալիր և որդեսէր հայրերնին տղաքը ճամբայ չդրած՝ հետեւեալ խրատներն կ'աւանդէր իրենց դրով, իբրև կտակ մը՝ իւր սրտին և սիրոյն արժանաւոր, և յուշարար աշխարհի մէջ բռնելու ընթացքին։ Այնչափ սիրտ, բարեպաշտութիւն և զգացմունք կ'ազդեն այդ խօսքերը, իրենց անպաճոյճ պարզութեամբը, որ կրնան իրենց ամէն հասակակցաց ալ օգտակար ըլլալ, մանաւանդ անոնց որ նոյն մեծախոհ բարերարին որդեգիրք են, կրթուելով իր անունը կրող սրբավայրին մէջ.

« Իմ սիրելի թանկ որդիք, Աղեքսանդր Ռափայէլ Ղարամեանց,
Յովհաննէս Խոջամալ Ղարամեանց.

« Հոգիք,

« Աղաչեմ ամենակալ բարի Աստուած՝ բարեխօսութեամբն Սրբուհի Կուսին և մանաւորապէս առաջնորդութեամբ Ռափայելի հրեշտակապետին, զի տացէ և աջողեսցէ ձեզ անվնաս և բարի նաւահանգիստ, յատկապէս իմաստութիւնն, աստուածպաշտութիւնն, առաքինութիւն, վասն փառաց իւր, և մխիթարութիւնն, պարծանք ծնողաց ձեր. ամէն։

« Բարիոք գիտէք, որդիք, կամ ժամանակաւ գիտելոց էք, վասն բարութեան ձեր յանձն առինք զրկել զմեզ ի տեսուն ձեր, և առնել բազում ծախս և նեղութիւնս. միայն յառաջանալ ձեր յուսումն և յիմաստութիւն. որով կախեալ կայ մարդոյ վախճան բարի։

« Վասն որոյ, սիրելի որդիք, աղաչեմ որպէս բարեկամ, և պատուիրեմ որպէս հայր, զի ընկալնուք խորհուրդ և պատուէր իմ սիրով և հնազանդութեամբ. զի է պատուէր Տեառն. ամենայն որդիք հնազանդ լինին ծնողաց, և ծնողք սիրեն որդիքն իւրեանց. որովհետև կատարեմ ես առաջադոյն պատուիրանին, որ նախ պարտն ձեր էր, ոչչափ և դուք պարտիք կատարել կամն իմ և հնազանդ լինել պատուիրանաց. որ այլ ինչ չէ՝ բայց վասն բարութեանն ձեր. ուստի պիտի կատարէք որպէս լէվ որդիք։ Այս է պատուէր իմ.

1. Նախ լինէք երկիւղած Տեառն, որ սովաւ կախեալ կայ ամենայն սկիզբն իմաստութեանն. ընդ որ լինէք պինտ և հաստատուն ի հաւատս ձեր ուղղափառ, կաթողիկէ և հռովմէական, ընդ որում ծնեալ էք. որ հաստատեմ գոլ ճշմարիտ։

2. Հնազանդ լերուք Հ. Նիկողայոս վարդապետին, որ է կարգեալ վարդապետ և ուսուցիչ ձեր, առ ի կրթել ձեզ հաւատս ձեր, և ուսանել բարի վարք կրթութեանն. և ընդ նմին ուսուցանել ձեզ ի լեզուս մեր հայկազեան, որ է սեփական լեզուն ձեր. զի էք ծնեալ հայ՝ և պարտիք գիտել լեզուն ձեր. ընդ որ երդմամբ ձեզ ասեմ, զի գուցէ, Տէր մի արասցէ, չգիտինալ ձեր լեզուն ձեր՝ ոչ եւս ճանաչեմ՝ ձեզ որդիք իմ. առ ի այս հաստատութեանն՝ բարիոք տեսանէք զտալ ձեզ վարպետ հայի, ընդ որ բախտաւորիք՝ գտանել վարպետ որպէս Հ. Նիկողայոսն. վասն որոյ պարտական էք պատուել, սիրել, հնազանդ լինել, և շնորհակալ լինելով ուսանել զամենայն որ ինչ պատուիրէ ձեզ. և ոչ լինել երախտամոռ ի երախտիս և վաստակն նորա ի ձեզ։

3. Մտոր Ուիլէմ Ռասն կարգեալ է վերատեսուչ ձեզ ի դպրոց ինկլիզի, առ ի ուսանել և սովորել լեզուն նոցա, գիրն և աշխարհօրէն ուսումն. ուստի պարտիք զգուշանալ և լսել խրատուց ինկլիզի վարպետին, որպէս և հրամանին Մտոր Ռասին։

4. Սինոր բաֆտան Լ.օրէնսին և նորին պարոնայ միշտ պատուէք. ադաբով նաւումն կենցաղավարէք, որ չնի ձեզանէ զզուեն. և ախորժեն։

5. Որդիք, որովհետև բարերար Աստուածն ձրի շնորհեալ է ձեզ ժամանակ բախտաւոր, զի ունիցիք վարպետք և ուսուցիչք զանազան, պարտէք գոհութեամբ ձեր Ստեղծողին հետևիք, մոքերնիդ բանէք, ջանք անէք շուտով սովորել զոր ինչ վարպետքն ձեզ ցուցանեն, որ մարդ դառնէք և պարոն. որ ձեր հօրն լինի պարծանք և մխիթարութիւն. չնի վաստակն իմ առնէք ունայն՝ և ծաղր զիս առնուցուք ի մէջ հասարակաց, յատկապէս ազգին մեր. զի ոչ ոք է արարեալ զոր ես առնեմ ձեզ, վասն ապագայ բարութեանն ձեր. գուցէ Տէրն մի արասցէ, չնէք ընդունակ ուսմանց և իմաստութեանն, լինիմ ես անպարտ, և դուք պարտաւորեալ. վասն որ զամենայն ըստ ինձէն գոլն՝ չեմ խնայել ի ձեզ առնել։

6. Գոլ ձեր ի փոքր հասակի, կարևոր այ գուցէ մոռացումն ձեզ չգիտել ընտանիքն ձեր. ուստի հարկաւոր տեսի ցուցանել զրովս, որ էք որդիք սեփական հօրն ձեր Հետվարդի. ունիք մայրն ձեր կենդանի, անուանեալ Մարիամ. որ էք զարգացեալ ի ստեանցն նորա կաթիւն, գոլ յաւել երախտիք ունենալ ի վերայ ձեզ, քան զայլ մարք՝ որ միայն ծնանին, բայց ոչ արեամբ իւրեանց կերակրեն. վասն որոյ ի մտաց յաւիտենական ի կեանս ձեր յիշատակի ունենէք վաս-

տակն և երախտիքն նորա ի ձեզ, զի պատուէք և մեծարէք։ Ունէք քուրս երկու. երէցն անուանեալ Աննա, և կրտսերն Աննա Մարիա. և փոքրիկ եղբայր մի անուանեալ Լուիզ. յիշատակի ունեցէք ի յաղօթս ձեր. առանց մոռանալ հօրաքոյրն ձեր Մադալինէն, և մօրաքոյրն ձեր Օվսաննէն, որ վաստակ ունի ձեզ վրայ։

7. Որդիք, կրկնեմ ձեզ զգուշացուցանել որ էք ազգով հայք. ոչ երբեք մոռնալ ազգն ձեր կամ լեզուն. ո՛ բնական բնութեամբ, և բարի ուսմանց օրէնքով ամենայն մարդ պիտի սիրէ ազգն իւր և օգնական լինի նորա պայծառութեանն. գիտաւորութեանս մին՝ արդարն ձեզ ասեմ, Լրսին ձեզ աղարկելն, և ջանալ ձեզ լինել իմաստուն՝ վասն ապագայ ձեր ազգին օգնութեանց համար. որ և ապաչեմ Աստուած՝ լինէք պիտանի... բանիւ կամ գործով։

8. Աղաչեմ և պատուիրեմ, սիրելիք, լինէք հեզ, խոհեմ և առաքինի ընդ դպրատանն որ լինէք յետանէ. սիրով, խնամով և ադարով կալն ընդ միւս ըշկոլիունքն. և ուսանէք՝ որ է սովորէք շուտով դասն որ վարպետն տայ. չլնի զըզվի վարպետն թէ սոքա զլուխք չոր ան. և պիտի փետով գործածել, և ձեր վերայ գուլթն պակասի։ Վերջապէս աղաչեմ Աստուած՝ որ դուք հնազանդ և լսուկ լինէք վարպետացն ձեր, հայր Նիկողայոսին և ինկլիզի վարպետին՝ որ ես ամօթանք չկրեմ։

9. Համարն՝ որ է լիստրն ձեր շորերին՝ տուի ձեզ, հետևողութեամբ բանացանէք և պահէք. ինչ կորի կամ փսորվի՝ գրէք պահեցէք որ ես իմանամ. և ամենայն ծախքն ձեր՝ թէ ուտելիք, խագանելիք և այլ հարկաւորութիւնն՝ մատր Դասն լցելոց այ. անհոգս լինէք. և ինչ հարկաւորութիւնն որ ցանկանէք՝ վարդապետիցն խընդրեցէք. նա տեսնէ ձեր խնդիրքն. իրաւի այ՝ կը տայ. կամ մատր Դասին կ'ասի տայ. բայց պատուիրեմ, սիրելիք, չլինէք շռայլ, և անպատշաճ փող վատնել, որ յետեւն փոշիմանութիւն գնի. այլ կէք սարքնով՝ որ է էքինոմիով մինչև մեծանէք, բան սովարէք և կարողանէք վաստակել. այնու յետ՝ ես ձեզ ցոյց կտամ որպէս է հարկն խարջելոյ. զգույշ լերուք։

10. Պատուիրեմ քեզ որդի Յովհաննէս, լինիս հնազանդ մեծ եղբօրն քոյ, և յետևիս լինել որպէս նա՝ ընթերցող գրոց և ուսմանց, որ սիրելի ինձ լինես. և խնդրեմ Դաֆայել որդւոյս որ սիրես և ուսուցանես եղբայրն քոյ, և լինէք ընդ միմեանց սէր և խնամարկեալ։

11. Սիրելի որդիք, պատուէր մի տամ և յետինն՝ որ լինէք երկիւղած Աստուծոյ, և հնազանդ ծնողացն և վարպետացն. պատուէք ծերոց, սիրէք ընկերն ձեր, լինէք գթութիւն և ողորմութիւն ի տընանկաց և աղքատաց. ոչ երբեք խօսի սուտ լեզուն ձեր, և ոչ առնուք բերանն ձեր խօսք աղտեղի կամ անպատշաճ. ոչ լինի աչք ձեր ագահ կամ չուզուկ. ձեռն լիցի անարատ և ոչ յափշտակող. ոտն

ձեր գնայ հանապազ ուղիղ և արդար. հեռի լինի սիրտն ձեր զամենայն բան գարշ և աղտեղի։ Ականջք ձեր ոչ թոյլ տայք լսել բան անառակ և տգեղ, և շունչ ձեր ոչ առնու հոտ անմաքուր. յատկապէս լինիք հեռի վատ ընկերակցութիւնից։

12. Պահելով պատուէրն իմ, որդիք, գտանէք գանձ ի յերկինս, և վարձք յաշխարհի առանց թշուառ տրտմութեան. բաւ է։ Երէց որդի իմ Ռաֆայէլ, լինես ապահով տան հօր քոյ և մխիթարիչ ծնողաց քոյ։ Յովհաննէս, դու ես արեամբ թերի. լինիս ի դաշտի արիութեամբ, առ ի հովանի առնել եղբարց քոց անուամբ և գործով քաջութեան քոյ։ Որոյ երկուսուստ ցանկամ և աղաչեմ Ամենակարողն, բարեխօսութեամբ Սրբոյ Կուսին և ամենայն Սրբոց, զի աճէք և զօրանէք, և եղիցի ձեզ բարի ճանապարհ. և ընդ նմին տամ ձեզ իմ հայրական օրհնութիւնն անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն »։

Եղև Մատրաս, սեպտեմբերի 17ին
յամի տեառն 1785.

Ձեր տեսուն Ծնալոյ կարօտ հայր
ՀԵՏՎԱՐԴ ՌԱՖԱՅԷԼ ՂԱՐԱՄԵԱՆՑ

Մոռանէք ոչ՝ յամէն զքաղիօնում
գիր գրէք բաբինին և նանինին։

Շարունակելի